ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2023թ.

ՀԵՏՔ ՄԵԴԻԱ ԳՈՐԾԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂ-ԼՐԱԳՐՈՂ

Տ. ԱՋԱՄՈՂԼՅԱՆԻՆ

էլ. փոստի հասցե՝ tatevrubeni101@gmail.com

հեռ.՝ +374 77 17 33 47

Ձեր՝ 10.11.2023թ. գրությանը.

Հարգելի տիկին Աջամողլյան

ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին ամրացված ուսումնական մասնաշենքերում վթարայնության վերաբերյալ սեյսմիկ հետազոտություններ չեն իրականացվել, առանձին դպրոցների օժանդակ շինությունների համար ունենք սեյսմիկ եզրակացություններ:

ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 148 հանրակրթական ուսումնական հաստատություններն ապահովված են կոմունալ տարրական հարմարություններով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ թվով 5 դպրոցների համար կառուցվում են շենքային համալիրներ /Վանաձորի Ռաֆֆու անվան թիվ 19, Ստեփանավանի թիվ 3, Ալավերդու Հովի. Թումանյանի անվան թիվ 2, Հագվի, Մեդովկա/: Մարզադահլիճներ են կառուցվում թվով 6 դպրոցների /Վանաձորի Խ. Աբովյանի անվան թիվ 9, Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23, Ագարակ, Վարդաբլուր, Ստեփանավանի թիվ 1 վարժարան /նախկին/, ամրացվելու է Ստեփանավանի թիվ 1 դպրոցին/ համար: Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոցի մարզադահլիճը հիմնանորոգվում է:

ՀՀ կառավարության 2021-2026թթ.-ի ծրագրով ամրագրված 300 դպրոցի կառուցման, վերակառուցման, հիմնանորոգման ծրագրի շրջանակներում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի օժանդակությամբ

կատարող՝ ԿՄՍ վարչություն,
հեռ. /0322/ 4-0161

մեկնարկել է ՀՀ մարզերի գյուղական բնակավայրերում կրթահամալիրների ստեղծման ծրագիրը: Նշված նախապայմաններից ելնելով ՀՀ Լոռու մարզում ընտրվել է թվով 32 բնակավայր, որոնցից 11-ում կձևավորվեն կրթահամալիրներ, 11-ի համար կկառուցվեն նոր դպրոցների շենքեր, 2-ում կկառուցվեն միայն մարզադահլիճների և հանդիսությունների դահլիճների մասնաշենքերը, իսկ ուսումնական մասնաշենքերը կդիտարկվեն վերանորոգման համար, 4-ի մասով անհրաժեշտ է լրացուցիչ դիտարկում (Ագարակի և Վարդաբլուրի դպրոցներն են, որոնք պահանջում են անհատական նախագծեր, Հաղպատ և Լեռնապատ, որոնք դեռ պետք է դիտարկվեն քաղշինի կողմից) և 2-ի մասով անհրաժեշտ կլինի հետագայում իրականացնել միայն ընթացիկ նորոգման աշխատանքներ (Արևաշող և Վահագնի): 2 կլաստերի մասով էլ անհրաժեշտ չէ կատարել հատկացումներ, քանի որ դրանց շենքերը արդեն կառուցվել կամ կառուցվում են:

Հարգանքով՝

14/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատարող՝ ԿՄՍ վարչություն,
հեռ. /0322/ 4-0161